

ՓԱՐՄԱՍՆԵՐԸ ՄԵՂԷ

«Գողերը, պոռնիկները, գինեմոլները եւ բամբասողները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն» (Ա. Կորթ. 6.10)

Ահաւասիկ Սատանան բոլորին բերանները չարախօսութեան անօրէն մոլութեամբ լեցուցած է: Յարատեւ կերպով բոլորին բերանները իրենց եղբոր դէմ չարախօսութեամբ եւ նախատիմով կը բոցավառէ: Կը նկատեմ, որ անօրէնութիւն գործող անձերը աներկիւղ են ու չեն փութար գողութեան եւ պոռնկութեան իրենց վատ արարքներէն ապաշխարութեամբ լուացուելու եւ սրբուելու: Եթէ կը գարշիս շնութեան, ուրեմն գարշէ՛ նաեւ բամբասանքէն: Եթէ շնութիւնը գէշ է, Աստուած հաւասարապէս կը դատէ նաեւ բամբասանքը: Բայց առաջալը, որ օրէնքը կ'ուսուցանէ, բամբասանքի անօրէնութիւնը շատ աւելի մեծ ցոյց կուտայ, երբ կ'ըսէ. «Ան, որ եղբայրը կը բամբասէ, օրէնքը կը բամբասէ եւ օրէնքը կը դատէ» (Յակ. 4.11): Եւ ո՞ր անօրէնութիւնը աւելի գէշ է քան այն, որ փոխանակ Աստուծոյ օրէնքը գործադրելու, ինքզինք տէր եւ դատաւոր կ'ընէ: Ըսուած է, որ օրէնսդիրն ու դատաւորը մէկ է, կը փրկէ, կ'ապրեցնէ եւ կորուստի կը մատնէ, իսկ դուն ինչո՞ւ կը դատես ուրիշին ծառան: Տե՛ս թէ քանի մահերու պատասխանատու է ան, որ թագաւորին պատիւն ու հեղինակութիւնը կը յափշտակէ եւ դատաւորին դատը անձնապէս ինք կը կատարէ, որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Իմա է Վրէժխնդրութիւնը եւ ես պիտի հատուցուցանեմ» (Բ. Յր. 32.35):

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԾՈՒՍ ԵՒ ԾԽԱՏԵՐ

Մեզ համար ծանօթ այս բառը, եկեղեցական շրջագիծէն ներս տարբեր իմաստ եւ նշանակութիւն ունի:

Համաձայն Մալխասեան բառարանին, ծուխ բառը այլ իմաստ մը եւս ունի: Կը նշանակէ տուն, յարկ, ընտանիք, որ ունի իր օճախը:

Այս հասկացողութեամբ, եկեղեցական բառագիտութեան մէջ ծուխ կը նշանակէ ընտանիք: Առ այդ իսկ, մենք կրնանք տեսլ, (այսինչ) եկեղեցւոյ ծուխերը որոշեցին նոր եկեղեցի մը շինել:

Վերոյիշեալ օրինակին հետեւողութեամբ, եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ալ կը կոչուի ծխատէր քահանայ եւ համանուն եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործօն կրթական կառոյցը՝ ծխական դպրոց:

Միջին Արեւելի հայահոծ գաղութներուն մէջ, ուր ազգային-եկեղեցական կազմակերպեալ կեանքը խորը սխառած է Ազգ. Սահմանադրութեան վրայ, անդամական դրութիւն գոյութիւն չունի, այլ՝ իւրաքանչիւր հայ ընտանիք ինքնին ծուխն է որոշեալ եկեղեցւոյ մը եւ ունի իր ծխատէր քահանան: Ծխային դրութիւնը ազգային առաջնորդարանի կողմէ կը սահմանուի:

Այսօր հրատապ հարց է, կեանքի ներկայ իրադարձութիւններուն մէջ, երբ ադանդաւորական շարժումներ կը փորձեն թափանցել հայ կեանքէն ներս եւ հաւատքի նոր վարդապետութիւններով նոր նամբաներ կը փորձեն բանալ մեր ժողովուրդին դիմաց, եկեղեցին եւ հոգեւոր հովիւները աջալուրջ կերպով պէտք է հաւատացեալներու ծուխը իրենց հոգատարութեան ներքեւ պահեն, որպէսզի անոնք գերծ մնան արտաքին թափանցումներէ եւ անփակտելիօրէն կապուած՝ իրենց Մայրենի եկեղեցւոյ:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԺԴ. ՏԱՐԻ **ԿՐՈՎԿԻ, 14 ՆՈՅՄԱՐԻ 2021** ԹԻԻ 46

ԿՐՈՎԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 25.9-26.7 Փիլ. 1.1-11:
ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 9.44-50

ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 9.44-50

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Հաւ մտիկ ըրէ՛ք եւ մի՛ մոռնաք ասիկա: Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկեցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միև կողմէ ալ կը վախճային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ, թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ եւ ով որ զիս ընդունած է՝ ընդունած կ'ըլլայ զիս դրկողը: Որովհետեւ ով, որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է՝ ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք՝ որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»:

Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն, որովհետեւ ան՝ որ հակառակ չէ՛ ձեզի կը նշանակէ, թէ՛ ձեր կողմն է»:

ՏԻՐՈՉ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Բարձրեալ է Յիսուս բայց բնաւ խոնարհը չ'անտեսեր: Հգօ՛ր է, բայց երբեք չի ոտնակոխեր տկարը: Մե՛ծ է, բայց չ'անտեսեր փոքրերը: Թագաւոր է, բայց չի նախատեր մեղքի ստրուկները: Անսխալական է, բայց չի դատապարտեր սխալածներս: Երանի՛ ամէնք ալ մմանինք իրեն եւ երբ մեծմանք դիրքով ու հանգամանքով, ասիկա պատմաւ չըլլայ, որ չտեսնենք մեր նմանները եւ չլսենք խեղներուն ձայնը :

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝
ԱՆԳՐԷԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ

Անդրեաս առաքեալ Պետրոս առաքեալի եղբայրն է, որ Գալիլիոյ լիճին եգերքը իր եղբորը՝ Պետրոսի հետ, կը կանչուի Քրիստոսի կողմէ առաքելութեան: Անդրեաս նախապէս եղած է Յովհաննէս Մկրտիչի աշակերտը եւ յսած ըլլալով Յովհաննէսի վկայութիւնը Յիսուսի մասին նախքան Յիսուսէ կանչուիլը, արդէն անպաշտօն հետեւողը եղած է Յիսուսի եւ այդ պատճառով կոչուած է «Նախակոչ» առաքեալ:

Անդրեաս առաքեալ շատ քիչ կը յիշուի աւետարաններուն մէջ: Աւանդաբար կ'ըսուի, թէ եղած է Սկիւթացիներուն քարոզիչ առաքեալը եւ սակայն եկեղեցի չէ հիմնած այնտեղ: Նաեւ քարոզած կը նկատուի Հիւսիսային Յունաստանի մէջ եւ նահատակուած Բաթրաս քաղաքին մէջ, բազմապատկութեան նշանին նման խաչի մը վրայ, որով խաչի այդ ձեւը կը կոչուի նաեւ Ս. Անդրեասի խաչ:

Փիլիպպոս Առաքեալ

Փիլիպպոս առաքեալ Բեթսահիդայէն էր, Անդրեաս եւ Պետրոս առաքեալներուն քաղաքէն (Յհ. 1.44):

Յիսուս երբ կը կանչէ զինք առաքելութեան, Փիլիպպոս առաքեալ առանց ժամանակ կորսնցնելու կ'երթայ եւ կ'աւետէ Նաթանայէլին, թէ գտած են այն մարդը, որու մասին Օրէնքի գիրքին մէջ գրուած է (Յհ1.45):

Փիլիպպոս առաքեալ երեք տարիներ հետեւելէ ետք Քրիստոսի, միւս առաքեալներուն նման, կ'անցի առաքելութեան եւ ըստ աւանդութեան կը քարոզէ Փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի խաչելութեամբ:

-Հարցում.- Ի՞նչ է նշանաբանի մատանիին իմաստը:

Պատասխ.-Նշանաբանները իբր սիրոյ գրաւական կամ նշան իրարու կը նուիրեն ոսկեայ մատանի, գորս կ'անցնեն իրենց մատնեմատերուն:

Մատանիներուն ոսկիէ շինուած ըլլալը կը նշանակէ, թէ ինչպէս որ ոսկին ազնիւ ու չժանգոտող մետաղ մըն է, նմանապէս զանոնք գործածողներն ալ, իրարու հանդէպ ունեցած սէրը պիտի պահեն մաքուր եւ անարատ: Նոյնպէս՝ մատանիի կտրութեան օրինակով, իրենց սէրը պիտի կեդրոնանայ միմեանց անձերու շրջանակին մէջ, անկէ դուրս չելլելու պայմանով: Նկատելով նաեւ, որ մատնեմատէն երկարող երակ մը ուղղակի սրտին կապուած է, ուստի խորհրդաբար մատանիները կ'ընդունուին իբրեւ երկու սրտերը իրարու միացնող միջոցներ:

Սովորութիւնն է նաեւ տղուն կողմէ աղջկան նուիրել ականջի օղ եւ թեւի ապարանջան: Օղը՝ տեղեկութեան նշան է, թէ՛ աղջիկը գայն նուիրող երիտասարդին մասին հարկ եղած տեղեկութիւնը քաղած է ապա յարմար դատած է գայն ունենալ իբր նշանած եւ ապագային ալ՝ ամուսին: Ուրեմն անոր սէրն ու անունը ընդմիշտ իր ականջէն կախուած պիտի մնան: Իսկ ապարանջանը որ կը հագնի կը նշանակէ, թէ այդ թեւերը կապուած ու վերապահուած են միայն գայն նուիրողին եւ անփակտելի են:

Մեծ է Տէրը, մեր Աստուածը, եւ ամէն օրհներգութեան արժանի՝ իր քաղաքին մէջ, իր սուրբ լեռան վրայ: Սաղմոս 48.1

ՄԱՆԱՆՆԵԼՈՒ ՀԱՏԻԿԻ ՆՄԱՆ ԱՃՈՂ ՀԱՐԱՏԸ

Երբ աշակերտները Յիսուսի ըսին. «Աւելցուր մեր հաւատքը», Տէրը անոնց պատասխանեց ըսելով. «Եթէ մանանելի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին.- "Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ", պիտի հնազանդի ձեզի» (Ղկ. 17.6): Ինչո՞ւ Յիսուս մանանելի հատիկին օրինակը կու տայ, խօսելու համար հաւատքի մասին: Գիտենք, որ մանանելի հատիկը սերմերէն ամենէն փոքրն է, բայց երբ աճի՝ բոլոր տունկերէն աւելի մեծ կ'ըլլայ եւ ծառի կը վերածուի (Մտ. 13.32): Երբ Քրիստոս հաւատքի մասին խօսելու համար՝ հատիկի ակնարկութիւն կ'ընէ, խորքին մէջ, հետզհետէ աճող հաւատքի մասին է, որ խօսած կ'ըլլայ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ**

Ինչպէս հողը, երբ իր մէջ առնէ սերմը՝ կը ծլեցնէ եւ կ'աճեցնէ զանիկա աստիճանական կերպով, այնպէս ալ, եթէ մենք, հաւատքը առնենք մեր սիրտերուն մէջ, որքան ալ փոքր ըլլայ ատիկա, նոյնիսկ եթէ սերմնահատիկի պէս փոքր ըլլայ, վստահ ըլլանք, որ անիկա հետզհետէ պիտի աճի:

**ԵՐԲ ՍԻՐՏԻ ԱՏՈՒԾՈՅ ԿԸ ՏԵՆՉԱՅ,
Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 42**

Ինչպէս եղջերուն կը փափափի վագող ջուրերուն, այնպէս ալ ես, ո՛վ Աստուած, ես եղբի՛ կը փափափիմ: Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի Աստուծոյն: Ե՞րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ: Օր ու գիշեր՝ արցունքս է կերակուրս, մինչ օրն է բուն մարդիկ ինձի կը հարցնեն.- «Ո՞ւր է Աստուած»: Որքան կը յիշեմ անցեալ օրերը, այնքան աւելի սիրտս կը փղթափի: Ի՞նչպէս բազմութեան գուլիք անցած՝ Աստուծոյ տունը կ'երթայի ցնծութեան ու երախտագիտութեան կանչերով, մինչ բազմութիւնը տօն կը կատարէր: Սակայն ինչո՞ւ կը խոռովիս: Աստուծո՛յ յուսա, եւ վերստին գովերգէ գայն ըսելով.- «Փրկիչս դո՛ւն ես»: Աստուած իմ, սիրտըս ա՛յնքան տխուր է: Ահա թէ ինչու՛ տարագիր այս վիճակիս մէջ՝ կը մտածեմ՝ բո՛ւ մասիդ, Յորդանանի երկրին, Հերմոնի եւ Փոքր լեռան վրայ: Միտքս կ'երթայ ստեղծագործութեանդ օրերուն, երբ ովկիանոսները ովկիանոսներուն կ'արձագանգէին ջրվեժներու շառաչով: Որովհետեւ ճիշդ այդպէս՝ բարկութեանդ յորձանքներն ու բոլոր ալիքները փշրուեցան իմ վրաս:

Տէրը ինձի հետ է, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ, գիշերը՝ իր երգով, որ աղօթք է Աստուծոյ, զիս կենդանի պահողին: Եւ աղօթքիս մէջ Աստուծոյ կ'ըսեմ.- Ի՛նչ ես իմ պաշտպան Վեմս, ինչո՞ւ մոռցար զիս. ինչո՞ւ համար տրտում ըլլամ, երբ թշնամի կը նեղէ զիս: Կարծես մահացու հարած կը ստանամ ամէն անգամ, որ ոտիներս զիս կը նախատեն՝ հարցնելով.- «Ո՞ւր է Աստուածդ»: Սակայն ինչո՞ւ պիտի տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խոռովիմ: Աստուծոյ պիտի յուսամ, եւ վերստին գովերգեմ գայն, ըսելով.- «Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»: